



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ  
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 Օգոստոսի 2019 թվականի N 24

ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ  
12 - Ի ՆԻՍԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14 - րդ հոդվածով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Արևաշող համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի 12 - ի նիստի օրակարգը

Օրակարգ

Լոռու մարզի Արևաշող համայնքի 2019 թվականի օգոստոսի 12 - ի նիստի

1. Արևաշող համայնքի համայնքային սեփականության հանդիսացող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելու եվ գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին
2. Արևաշող համայնքի բնակիչ Նարեկ Հայկի Թադևոսյանին 2019 թվականի համահայկական 7 - րդ խաղերին մասնակցելու եվ համայնքի մարզական պատիվը բարձր պահելու համար խրախուսելու մասին

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՅՈՒԼԱԶՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՐԻԻ ՄԱՐԶԻ  
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 Օգոստոսի 2019 թվականի N 26

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՆԱՐԵԿ ՀԱՅԿԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ  
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7 - ՐԴ ԽԱՂԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԵՑԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱԿԱՆ ՊԱՏԻՎԸ  
ԲԱՐՁՐ ՊԱՇՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12 -  
րդ հոդվածի 1 - ին մասի 7 - րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Արևաշող համայնքի բնակիչ Նարեկ Հայկի Թադևոսյանին 2019 թվականի համահայկական 7 - րդ խաղերին մասնակցելու և համայնքի մարզական պատիվը բարձր պահելու համար տալ միանվագ դրամական խրախուսում 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով:
2. Համայնքի ղեկավարին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԴԻՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՅՈՒԼԱԶՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

12 Օգոստոսի 2019 թվականի N 25

**ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ  
ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՈՒՄՍԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒ ՏՐԱՎՈՒՄԻ ԵՐԿՐՈՒՄ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային Օրենսգրքի 67-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և 4-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ – ի ապրիլի 12 – ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը Արևաշող համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Արևաշող համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ներքոհիշյալ հողամասի աճուրդ վաճառքով օտարելուն
  - 1) լոտ 1 ծածկագիր 06-021-0112-0264, 0.26168 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4 – րդ կարգի արոտավայր, /վկ 06052019-06-0029/ մեկնարկային գինը սահմանել 172000 /մեկ հարյուր յոթանասուն երեք հազար/ ՀՀ դրամ,
  - 2) լոտ 2 ծածկագիր 06-021-0112-0263 0.18984 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք /վկ 06052019-06-0029/ մեկնարկային գինը սահմանել 36000 (երեսունվեց հազար) ՀՀ դրամ,
2. Տալ համաձայնություն համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասերը մրցույթային կարգով 25 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրելու
  - 1) լոտ 1 ծածկագիր 06-021-0107-0005, 2.87871 հա մակերեսով 4 – րդ կարգի գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող, /վկ.06022019-06-0048/ վարձակալության մեկնարկային գինը սահմանել 10700 /տաս հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ,
  - 2) լոտ 2 ծածկագիր 06-021-0107-0003, 0.46577 հա մակերեսով 4 – րդ կարգի գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող, /վկ.26062019-06-0056/ վարձակալության մեկնարկային գինը սահմանել 2500 /երկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,
  - 3) լոտ 3 ծածկագիր 06-021-0107-0002, 1.49474 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4 – րդ կարգի վարելահող /վկ 26062019-06-0051/ վարձակալության մեկնարկային գինը սահմանել 5500 /հինգ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
  - 4) լոտ 4 ծածկագիր 06-021-0107-0006, 10.9239 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4 – րդ կարգի արոտավայր, /վկ. 26062019-06-0050/ վարձակալության մեկնարկային գինը սահմանել 19000 /տասինը հազար/ ՀՀ դրամ:
  - 5) լոտ 5 ծածկագիր 06-021-0107-0004, 1.85483 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4 – րդ կարգի խոտհարք, /վկ. 26062019-06-0047/ վարձակալության մեկնարկային գինը սահմանել 6300 /վեց հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ:

3. Համայնքի ղեկավարին աճուրդ-վաճառքի և վարձակալության մրցույթի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ նաև որակական հատկանիշները), ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումները (ներառյալ՝ սերվիտուտները):
4. Սահմանել՝ աճուրդի և մրցույթի մասնակցության վճար 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, աճուրդային և վարձակալության մրցույթի մեկ քայլի չափ՝ լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով, նախավճարի չափը սահմանել՝ լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով:
5. սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՅՈՒԼԱԶՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼԿԱՐԴ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

